

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԸ

Ա. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ՄԱՄՆԱԿՑԱԾ ՀԱՅ ԿԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԶՈԿԱՏՆԵՐՈՒՄ (1914-1918)

ՌԱՖԱՅԷԼ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆԱՆ

Հայ ռազմական եւ քաղաքական գործիչ Գարեգին Նժդեհի (Տէր Յարութիւնեան, 1886-1955) 1903ին սկիզբ առած հասարակական գործունէութիւնը ներկայացնող աշխատութիւններում, կենսագրական ականարկներում եւ յօդուածներում Առաջին Աշխարհամարտի ընթացքում Կովկասեան Ճակատում մարտնչած հայ կամաւորական խմբերի կազմում նրա գործունէութեան մասին գրեթէ ոչինչ չկայ: Միայն նշուում է, թէ նա եղել է կամաւորական երկրորդ խմբի հրամանատարի օգնականը¹:

Մեզ յաջողուեց պատմաբան Վահան Մելիքեանի կողմից վերջերս Վրաստանի Պատմական Կենտրոնական Արխիւում յայտնաբերուած ու Պատմաբանասիրական Հանդէսում հրապարակուած, Հայկական Առաջին Զօրագնդի հրամանատար Սմբատի ստորագրութեամբ վաւերացուած Նժդեհի ծառայողական ցուցակում (կազմուել է 1916ի Հոկտեմբերի 21ին)², Համաշխարհային Երկրորդ Պատերազմի վերջին շրջանում Նժդեհի ձեռքակալութիւնից յետոյ խորհրդային իշխանութիւնների նրա հետ անցկացրած հարցաքննութիւնների արձանագրութիւններում, Առաջին Աշխարհամարտի տարիներին հրատարակուած հայատառ մամուլում, յատկապէս՝ Ալեքսանդրապոլում (ներկայումս՝ Գիւմրի) լոյս տեսնող Ժայռ թերթում, հայոց ազատամարտի մասնակիցների, մասնաւորաբար՝ Մարտիրոս Աբրահամեանի (գառնեցի), Ղազար Քոչարեանի եւ այլոց տպագիր յուշերում, Բոստոնում հրատարակուած Հայրենիք ամսագրում լոյս տեսած, ինչպէս նաեւ այլ աղբիւրներում բազմաթիւ նիւթեր գտնել, որոնցով լրացուում է Նժդեհի կենսագրութեան առայսօր ամենաշուտամասիրուած՝ 1914-1918 շրջանը: Սոյն յօդուածի վերջին՝ 1917-18ին վերաբերող մասը նախնական վիճակով հրատարակուել է մեր Վարդ Նժդեհի խորագրուած ուսումնասիրութեան մէջ³: Անհրաժեշտ ենք համարել այս հատուածը մի անգամ եւս ընդգրկել սոյն յօդուածում՝ պահպանելու համար նիւթի ամբողջականութիւնը: Այսու-

հանդերձ, յօդուածի այս բաժնում եւս նախկինի համեմատութեամբ կատարուել են որոշակի խմբագրական փոփոխութիւններ:

ՆԺԴԵՀՆ ՈՒ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԶՈԿԱՏՆԵՐԻ ԿԱԶՄԱՒՈՐՈՒՄԸ

Հայ կամաւորութեան շարքերում Նժդեհի անցած մարտական ուղիին ներկայացնելուց առաջ, նախ շատ թուուցիկ ներկայացնենք հայկական կամաւորական ջոկատների ստեղծման հանգամանքներն ու պատմութիւնը:

Հակառակ Առաջին Աշխարհամարտի շրջանակներում ռուս-օսմանեան պատերազմի բռնկման պահին հայ քաղաքական կուսակցութիւնների եւ նշանաւոր ազգային գործիչների ցուցաբերած վերապահութիւններին, Կովկասեան Ճակատի ռուսական հրամանատարութիւնը հայկական կամաւորական խմբերի կազմաւորումը սկսել էր 1914ի Օգոստոսից: Կովկասի փոխարքան եւ ռուս բարձրաստիճան այլ պաշտօնեաներ ամէնուր եւ ամէն առիթով յայտարարում էին, թէ եկել է Ռուսաստանի ձեռքով Արեւմտահայաստանի հարցը լուծելու ամենայարմար պահը: Հայ քաղաքական միտքը կամաւորական խմբեր կազմելուն դէմ էր հետեւեալ նկատառումներով.-

ա- Վտանգաւոր է պատերազմի ընթացքում օսմանցի թուրքերի դէմ հանել հայ կամաւորների, քանի որ թուրքերը դա առիթ կը դարձնեն կազմակերպելու իրենց տիրապետութեան տակ բնակչուող հայերի կոտորածներ,

բ- Եթէ ռուս կառավարութիւնը իրօք շահագրգիռ էր հայ ժողովրդի դարաւոր իղձերը ի կատար դարձնել, ապա պիտի որ իր սահմաններում բնակչուող հայերից զօրակոչած եւ ռուս-գերմանական ճակատ քշած հայ զինուորներին փոխադրէր Կովկասեան Ճակատ:

Այսուհանդերձ, հայ ազգային կուսակցութիւններն ու գործիչները չկարողացան դիմակայել ռուսական պետական մեքենայի կամաւորական շարժման մասին ռուսահայերի մէջ ծաւալած ընդգրկուն քարոզչութեան, որ կարճ միջոցում շարժումը դարձրեց տարերային ու համատարած: Այս պայմանների ներքոյ, հայ քաղաքական կուսակցութիւններն ու ազգային գործիչներից շատերը հարկադրուեցին մտնել այդ խաղի մէջ՝ կամաւորական զնդերը հնարաւորինս հայ ազգային շահերին ծառայեցնելու եւ հայութեանը աւելի մեծ աղէտներից փրկելու յոյսերով:

Սկզբնական շրջանում կազմաւորուեց չորս խումբ: Առաջին խմբի հրամանատարն էր Անդրանիկը (Օզանեան), նրա օգնականները՝ Սե-

պուհն (Արշակ Ներսիսեան) ու Սմբատը (Բորոյեան): Երկրորդ խմբի հրամանատարն էր Դրօն (Կանայեան), նրա օգնականը՝ Դաշնակցական Խէչօն (Խաչատուր Նախիջևեանցի Ամիրեան), սպայակոյտի կառավարիչը՝ Արմէն Գարօն (Գարեգին Փաստրմաճեան): Երրորդ եւ չորրորդ խմբերի հրամանատարներն էին համապատասխանաբար Համազասպն (Սրուանձտեան) ու Քեռին (Արշակ Գաւաթեան): Բոլոր չորս ջոկատներում 1914ի Հոկտեմբերի վերջին կար 2482 մարտիկ: Բացի այդ, 600 կամաւոր պահեստայիններ կային Գիւմրիում եւ Իգդիրում: Հայոց կամաւորական խմբերը ռազմաճակատ մեկնեցին 1914ի Նոյեմբերին: Առաջին խմբի մարտուղին էր՝ Սալմաստ-Վան, երկրորդինը՝ Իգդիր-Բայազէտ-Բերկիր-Վան, երրորդինը՝ Կաղզուան-Ալաշկերտ-Մանազկերտ-Բիթլիս, չորրորդինը՝ Սարիղամիշ-Էրզրում⁴:

Առաջին Աշխարհամարտի սկզբնական օրերին Նժդեհը գտնւում էր Բուլղարիայում: Նա սովորել էր Սոֆիայի զինուորական ուսումնարանում, իբրեւ Հայկական Ազգային Լեգէոնի հրամանատար մասնակցել՝ Բալկանեան Պատերազմին (1912-13), ունէր պորուչիկի (lieutenant) կոչում եւ Բուլղարական Ծառայութեան Արիւթեան Ասպետ էր: Օսմանեան Թուրքիայի դէմ Ռուսաստանի պատերազմի նախօրեակին, Նժդեհը դիմել է «Սոֆիայում ռուսական փոխիւպատոսութեանը՝ թուրքախաւտակ հայերից կամաւորական ջոկատ կազմաւորելու գործում ինձ աջակցելու եւ Ռուսաստան-Թուրքիա պատերազմի դէպքում ռուսական բանակի կազմում Թուրքիայի դէմ պայքարելու խնդրանքով»⁵: Նժդեհը՝ Անդրանիկի եւ բազմաթիւ կամաւորների հետ Բաթումի վրայով Թիֆլիս է հասել 1914ի Հոկտեմբերին⁶, իսկ հայկական կամաւորականներին անդամագրուել՝ Նոյն ամսի 13ին⁷:

1915ի Մայիսից ռուսական զօրքերի գերազոյն գլխաւոր հրամանատարի հրամանով կազմաւորուեցին եւս երեք կամաւորական խմբեր: Հինգերորդ խմբի հրամանատարն էր Խանասորի Վարդանը (Սարգիս Մեհրաբեան), վեցերորդի՝ կապիտան Յովհաննէս Ջանփոլադեանը, իսկ եօթերորդի՝ Իշխան Յովսէփ Արղութեանը⁸:

Հինգերորդ խմբի կազմաւորման աշխատանքները սկսել էին դեռեւս 1914ի Դեկտեմբերից⁹: Կամաւորական երկրորդ զնդի վաշտապետներից Ղազար Քոչարեանը նշում է. «Մեր ստացած տեղեկութիւնների համաձայն, Վարդանի եւ Գ. Նժդեհի նախաձեռնութեամբ կազմուած էր նաեւ հինգերորդ գունդ մը, որ վրայ հասած նահանջի պատճառաւ՝ ստիպուած էր Ալեքսանդրապոլ մնալ:

Երեսանի Ազգային Խորհուրդի եւ [Հայ Յեղափոխական] Դաշնակցութեան Կեդր. Կոմիտէի որոշումով, Արմէն-Գարօն ու Դաշնակցական Խէչօն պաշտօնով Ալեքսանդրապոլ ուղարկուեցան: Վերոյիշեալ պատգամաւորութիւնը նպատակ ունէր Վարդանին ու Նժդեհին համոզելով՝ կազմուած խումբը մեզի միացնել:

Այս մեկնումէն քանի մը օր յետոյ, գործը յաջողութեամբ վերջացած ըլլալով, նորակազմ ուժերը չորս գումդերու վրայ կը բաժնուէին արդէն: Նժդեհը բանակը վերակազմելու պաշտօնով մեզ միացաւ»¹⁰:

Նոյն իրողութեան վերաբերեալ հպանցիկ նշուած է նաեւ Նժդեհի ծառայողական ցուցակում. Նժդեհը «որպէս զօրագնդի կազմաւորման գործը իր վրայ է վերցրել հայկական հինգերորդ զօրագնդի կազմաւորման գործը եւ շնորհիւ պորուչիկի բացառիկ կորովի եւ անխնց աշխատանքի՝ կամաւորականները ամենասեղմ ժամկետում պատրաստուել են շարային եւ մարտունակ կեանքի: Նշուած զօրագումդը իր զինուորական եւ բարոյական նախապատրաստութեամբ օրինակելի էր»¹¹:

Վերոյիշեալ վկայութիւններից պարզուում է, որ Նժդեհը՝ Վարդանի հետ միասին, ձեռնարկել է հինգերորդ խմբի կազմաւորմանը: Այնուհետեւ, սակայն, 300 հոգով՝ հինգերորդ զնդի մեծ մասով, «բանակը վերակազմելու պաշտօնով», այսինքն՝ զօրամասը վարժեցնելու, արհեստավարժ դարձնելու նպատակով, վերին ղեկավարութեան՝ Հայոց Ազգային Կենտրոնական Բիւրոյի¹² որոշմամբ Նժդեհը միացել է Դրոյի հրամանատարութեամբ գործող երկրորդ զնդին: Սա խօսում է զինուորական գործից հասկացողների շրջանում երիտասարդ Նժդեհի բաւական մեծ հեղինակութեան ու համարումի մասին:

Քոչարեանը շարունակում է. «Մեր Զանաքեռ եղած միջոցին, աչքառու փոփոխութիւններ կատարուեցան: Կամաւորական բանակը հետզհետէ դուրս կուգար իր նախկին ձեւէն: Խումբերը վաշտերու եւ խմբապետներն ալ վաշտապետներու կը վերածուէին: Այդ ժամանակ, Դրոյի հիւանդութեան ու Արմէն Գարոյի ալ բացակայութեան պատճառաւ, գումդը Խէչոյին էր յանձնուած»¹³:

Երկրորդ զնդի հերոս վաշտապետներից մէկը, դէպքերին քաջատեղեակ Մարտիրոս Աբրահամեանը նոյնպէս վկայում է. «Նոյն օրերին Ալեքսանդրապոլից Երեսան փոխադրուեց Վարդանի գումարտակը եւ տեղաւորեց Նորքում:

Վարդանի օգնականն էր Նժդեհը:

Այնուհետեւ Կարսից Երեսան եկան-փոխադրուեցին նաեւ Քեռու եւ Համազասպի գումարտակները:

Դրոն էլ, շատ չանցած թողեց Թիֆլիսի հիւանդանոցը, եկաւ Երեւան ու ստանձնեց իր գումարտակը:

Փոփոխութիւններ կատարուեցին գումարտակների կազմի մէջ:

Վարդանի գումարտակը բաժանեց Դրոյի, Քեռու եւ Համազասպի գումարտակների վրայ եւ երեք գումարտակները միացնելով դարձան մի գունդ, ԱՐԱՐԱՏԵԱՆ ԳՈՒՆԴ անունով, որին հրամանատար կարգեց Վարդանը: /.../

Ալաշկերտի ճակատի ռուսական զօրաբաժնի հրամանատարը փոխեց, նոր հրամանատար նշանակեց Զօր. [Պիոտր Իվանովիչ] Օգանովսկին:

Անիից Լեհաստան գաղթած եւ ազգութիւնը կորցրած, դժբախտ հայերի սերնդից էր Զօր. Օգանովսկին:

Հայաստան գալուն պէս, անցաւ Էջմիածին, տեսնեց կաթողիկոսի հետ, պատմեց նրան իր «հայկական ծագման» մասին... զնաց Անին տեսնելու:

Նա շատ էր սիրում հայ կամաւորներին: /.../

Արարատեան գունդը կազմ ու պատրաստ էր արդէն, երբ 1915 թի Ապրիլին Վանից սուրիանդակ եկաւ, տեղեկացնելով որ «Վանը ապստամբել է եւ օգնութիւն է խնդրում», - ատելացնելով, թէ «Օգնութիւնն ուշանալու դէպքում, շրջանի ժողովուրդը կարող է կոտորածի ենթարկել...»:

Զօր. Օգանովսկին կարգադրեց, որ Արարատեան գունդը պատրաստի, երեք օրից յետոյ մեկնել Վան:

Երեւանցիք Քանաքեռում ճաշ տին գնդին:

Մի քանի հազար հոգի Քանաքեռ էին եկել, գնդի ռազմափորձը դիտելու համար...

Արարատեան գնդի հրամանատարական կազմին նոյն գիշեր հիւրասիրեց Երեւանի Թեմակալ Առաջնորդ Խորէն Մուրադբեգեան Սրբազանը (յետագային Խորէն Ա. Վեհափառ): /.../

Սեղանապետն էր դերասան [Յովհաննէս] Աբելեանը: /.../

1915 թի Ապրիլ 28ին, Արարատեան գունդը դուրս եկաւ Երեւանից ճանապարհելով դէպի Վան: /.../

Գիշերեցինք Էջմիածնում... /.../

Առաւօտեան ամբողջ գունդը կանոնաւոր շարքեր կազմեց եւ ընդունեց կաթողիկոսին: Վեհափառն օրհնեց գնդին, նկարեց գնդի հետ:

Երեկոյեան, երբ գունդը մտաւ Իգդիր, վրաններ խփեց:

Չգիտեմ ինչ պատճառով, երկու օր մնացինք Իգդիրում»¹⁴:

Քոչարեանի եւ Արարհամեանի վկայութիւնները հաստատուում են նաեւ դիւանական փաստաթղթերով, ըստ որոնց՝ 1915ի Ապրիլի 2ին, Արարատեան Դաշտում կայանած Դրոյի, Համագասպի եւ Քեռու խմբերը Քանաքեռում միաւորուեցին Վարդանի հինգերորդ խմբին, կազմեցին միացեալ հայկական 3300 հոգիանոց զօրաջոկատ, որի հրամանատար նշանակուեց Վարդանը, իսկ հեծեալ մասի պետ՝ Խէչօն:

Նժդեհի ծառայողական ցուցակում եւս հաստատուում է, որ «Արարատեան Զոկատի յարձակման նախօրէին (15 Ապրիլի 1915) հինգերորդ զօրագունդը վերակազմաւորուել է եւ այդ իսկ պատճառով պորուչիկ Նժդեհը 300 կամաւորներով միացել է երկրորդ զօրագնդին, ուր եւ եղել է զօրագնդի հրամանատարի օգնականը: Նոր պաշտօնում պորուչիկն իրեն յատուկ եռանդով ձեռնամուխ եղաւ երկրորդ զօրագնդի նախապատրաստմանը, եւ շուտով նրա գործունէութիւնը տուեց լաւագոյն արդիւնքը. ընդ որում՝ Նժդեհը արժանացել էր ընդհանուրի համակրանքին եւ կամաւորականների սիրուն»¹⁵:

Այս բոլոր տուեալները իրար համադրելիս ճշտուում է, որ Նժդեհը իր 300 կամաւորներով Դրոյի հրամանատարութեամբ գործող կամաւորական երկրորդ խմբին է միացել Քանաքեռում, 1915ի Ապրիլի 15ին:

ՆՇԴԵՀՆ ՈՒ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԳՆԴԻ ՄԱՐՏԵՐԸ 1915ԻՆ

Արարատեան Գունդը Քանաքեռից դուրս է գալիս 1915ի Ապրիլի 15ին եւ Երեւան-Էջմիածին-Իգդիր ճանապարհով Ապրիլի 21ին հասնում է Կիզիլդէիզ եւ մտնում Զօրավար Ա. Նիկողեւի գլխաւորած Բայազէտի Զօրաջոկատի կազմում, իսկ Մայիսի սկզբներին մերձենում է Վանի մատոյցներին¹⁶:

Դիւանական մէկ այլ փաստաթղթում նոյնպէս նշւում է, որ 1915ի Ապրիլի 20ին Արարատեան Զօրագունդը Իգդիրից հասնում է Կիզիլդէիզ եւ ընդգրկւում ռուսական զօրքերի Բայազէտի Զօրաջոկատի կազմում¹⁷:

Հետեւելով Արարատեան Գնդի մարտական գործողութիւններին, կարող ենք ճշգրիտ որոշել, թէ ի՞նչ մարտերի է մասնակցել Նժդեհը: «Բայազէտի զօրաջոկատին, - դիւանական փաստաթղթերի վրայ հիմնուելով գրում է պատմաբան Մուրադ Կարապետեանը, - Կովկասեան Բանակի հրամանատարի՝ Ապրիլի 24-ի հրամանով կարգադրուած էր անցնել թուրքերից գրաւած Տափարիզի կիրճը (Բայազէտից դէպի հարաւ) եւ, ճեղքելով թուրքական զօրքի դիմադրութիւնը, բացել Վան տանող ճանապարհը: Այս խնդիրը իրականացնելու նպատակով, դեռեւս

Ապրիլի 23-ի հրամանի համաձայն, Բայազետի Ջօրաջոկատը բաժանուեց երեք զօրաշարասեան: Ջօրաջոկատի աջ շարասեանը, որի հիմքը կազմում էր հայկական 2-րդ կամավորական խումբը՝ 1022 մարդ, որոնցից 678-ը արեւելահայեր էին, իսկ 344-ը՝ արեւմտահայ էր, Դրոյի գլխավորութեամբ, յանձնարարուեց եղած ոյժերով Ապրիլի 24-ին դուրս գալ Ջուրավա գիւղից եւ շարժուել Սարինգէօլ Լճի ուղղութեամբ, ապա ետ շարժուել հակառակորդին Սարինգէօլ եւ Դասինգէօլ Լճերի մօտից: Առաջին ընդհարումը հակառակորդի հետ 2-րդ խումբը ունեցաւ 1915 թ. Ապրիլի 24-ին՝ Քեալասարում (*գուցէ՛ Գեալարաշ - Ռ. Հ.*), երկրորդը՝ Դասինգէօլում Ապրիլի 25-ին, երրորդը՝ Ապրիլի 28-ին՝ Բայազետասոյի (sic! - *Ռ. Հ.*) մօտ:

...Իսկ 2-րդ եւ 4-րդ հայկական խմբերի միացեալ ոյժերը Ապրիլի 30-ին ազատագրեցին Գիւմիշ եւ Հաւիդան բնակավայրերը, որի շնորհիւ ճանապարհի բացուեց դէպի Բերկրի (*այժմ՝ Մուրադիէ - Ռ. Հ.*): Նոյն օրը ... հայկական 2-րդ, 3-րդ, 4-րդ կամավորական խմբերը շարժուեցին Բերկրիի դաշտ եւ, ջախջախելով քրդական՝ համիդէական նշանակալի ոյժերը, գրաւեցին Բերկրի Կալան...

1915թ. Մայիսի 3-ից 4-ը Վանի շրջակայքում քրդերի հետ տեղի ունեցան մի շարք կարճատեւ, բայց արիւնահեղ մարտեր, որից յետոյ, Արարատեան Ջօրաջոկատի 2-րդ եւ 4-րդ կամավորական խմբերի հեծեալ զօրամասերը Խէչոյի ընդհանուր հրամանատարութեամբ ... Մայիսի 5-ի երեկոյեան առաջիններից մտան Վան: Գեներալ Նիկոլաեւի՝ Բայազետի զօրաջոկատի միւս զօրամասերի հանդիսատր մուտքը Վան քաղաք տեղի ունեցաւ Մայիսի 6-ին»¹⁸:

Նժդեհի ծառայողական ցուցակում եւս նշուում է, որ նա «Բայազետի Ջօրաջոկատի կազմում մասնակցել է հետեւեալ արշաւանքներին եւ մարտերին.

Գեալարաշ (գիւղ Բիթլիսի նահանգի Սասուն գաւառում - Ռ. Հ.) (27 Ապրիլի 1915), Բերկրի-Կալա (2 Մայիսի 1915). Բերկրիի կիրճով մարտանցնելիս մեր աջթեւային պարեկախմբերը հաղորդեցին, որ հակառակորդը մերձատր սարի վրայ է: Պորուչիկ Նժդեհին հրամայուեց մեր աջ թևին սպառնացող հակառակորդին ետ շարժել:

Պորուչիկը վերցրեց կէս վաշտ, դրանից առանձնացրեց մէկ դասակ՝ թշնամուն ճակատ ցուցադրելու համար, իսկ ինքը՝ միւս դասակը գլխավորելով, թուրքերի համար անսպասելի յայտնուեց հակառակորդի թետում եւ յանդուգն գրոհով նրան դուրս մղեց ամրացուած բարձունքից: Այդ քաջագործութեան համար, որով նա դիւրացրեց Բերկրիի կիրճի

մարտանցումը, Բայազետի Ջօրաջոկատի պետ Ջօրավար Նիկոլատի կողմից ներկայացուեց Ս. Վլադիմիրի երրորդ աստիճանի շքանշանի: Շէյխ-Կարա՝ 5 Մայիսի 1915. այս ճակատամարտում, հակառակորդի բոլոր կրակի ներքոյ, պորուչիկը առաջինը նետուեց գիտ, իր ետեւից տանելով ջոկատը եւ չնայած ակնյայտ վտանգին՝ բարձրացաւ մեծ շինութեան տներից մէկի տանիքը ու կրակ բորբոքեց այն պատուհանների առջեւ, որոնք անցարգելներով ամրացուած էին հակառակորդի կողմից եւ ոչնչացրեց թշնամու դասակը: Այդօրինակ քաջագործութեան համար ջոկատի հրամանատարը նրան ներկայացրեց արիութեան՝ Աննայի չորրորդ աստիճանի շքանշանի (գեկուցագիր թիւ 14831):

Արարատեան Ձոկատով մտաւ Վան քաղաք (6 Մայիսի 1915)»¹⁹:

Այստեղ պէտք է նշել, որ ռուսական զօրքերը չէին ուզում մտնել Վան: Հայ կամաւորների հրամանատարները, առանց ռուսական զօրամասերի աջակցութեան, շարունակում են յարձակումը՝ նրանց հարկադրելով հետեւելու իրենց: Այդպիսի մի դէպք է պատահել կամաւորական երկրորդ գնդի հետ, որ ռուսական զօրքի առաջապահն էր եւ կռոււմ էր հիմնականում քրդերի դէմ: Դէպի Վան արշաւանքի ժամանակ, ռուս հրամանատարութիւնը, առանց Դրոյին տեղեակ պահելու, փոխում է շարժման ուղղութիւնը, որի պատճառով մօտ 2000 քրդեր եւ թուրքեր չըջապատում են Դրոյի ջոկատը: Ծանր վէրք ստացած Դրօն չի կարողանում շարունակել հրամանատարութիւնը: Գունդը գլխաւորում են Խէջօն (հեծելագօր) եւ Նժդեհը, որոնք անհաւասար կռոււմ ճեղքում են պաշարումը, գունդն ազատում գերութիւնից, որից յետոյ, Մայիսի 5ի երեկոյեան գունդը մտնում է Վան: Ռուսական հրամանատարութիւնը մատնանշում է Նժդեհի քաջագործութիւնները²⁰:

Վանի ազատագրումից անմիջապէս յետոյ, Մայիսի 8ին անցնելով յարձակման, հայկական կամաւորական երկրորդ խումբը Մայիսի 12ին գրաւեց Շատախը՝ մինչ այդ մի քանի կատաղի մարտեր մղելով Գիրանի դաշտում: Մայիսի 16-20ը Գիւաւաշ, Կարկառ եւ Առինջ գիւղերի մօտ տեղի ունեցած կռիւներից յետոյ, Սոքանց գիւղի մօտ ջարդելով թուրք ոստիկանների եւ քուրդ զինեալ խմբերի միացեալ ջոկատներին, երկրորդ խումբը Մայիսի 18ին գրաւեց Մոկսը: Մայիսի 22-25ին, երկրորդ եւ չորրորդ խմբերը միասնաբար ետ չպրտեցին Մոկս-Աղթամար մարտագիծը ճեղքել փորձող թուրքական ոյժերին, իսկ Մայիսի 30-31ին չէզոքացրեցին Մոկսը Շատախից կտրել ձգտող թուրքերի բուռն յարձակումները:

Մինչ այդ, Արարատեան Գուռդը ազատագրել էր նաեւ Սպարկերտի ու Մարմրտունքի շրջանները²¹ :

Հայ կամաւորական զնդերի պատմութեան մասնագէտներ Կարապետեանն ու Արամ Նազարեանը, Իհարկէ, չեն նշում Նժդէհի մասնակցութիւնն այս կռիւներին, քանի որ ծանօթ չեն եղել դրանք հաստատող աղբիւրներին եւ յուշագրութիւններին: Մինչդեռ, Նժդէհի ծառայողական ցուցակը հաստատում է թէ վերջինս «Վանից դուրս եկաւ Մայիսի 8ին»: Այնուհետեւ, նոյն ծառայողական ցուցակի համաձայն, Նժդէհը «մասնակցել է հետեւեալ արշաւանքներին ու ճակատամարտերին. Սիսեաթ-Դերէի (11 Մայիսի 1915), Աւսիի (ճիշտը՝ Աւասուր՝ գիւղ Վանի նահանգի Բերկրի գաւառում - Ռ.Հ.) (12 Մայիսի 1915), Շատախի (13 Մայիսի 1915), Սոկեանցի (ճիշտը՝ Սոխկանց - Ռ.Հ.) (17 Մայիսի 1915), Մոկսի (19 Մայիսի 1915), Սպարկերտի (8 Յունիսի 1915)»²²:

Դէպքերի մասնակիցների վկայութիւններից պարզւում է, որ Նժդէհը վերը յիշատակուած կռիւների խիզախ հրամանատարներից ու կազմակերպիչներից էր, Շատախ-Մոկսը գրաւելու գործողութեան ղեկավարն ու տնօրէնը:

Դէպքերի մասնակից Տիգրանն, օրինակ, իր յուշերում պատմում է. «Մայիս 11... կը մտնեմ տէրտրոջ սենեակը, եւ ահա կը հանդիպեմ Դրօն շրջապատուած իր վաշտապետներով՝ Նժդէհը, Եապօնը, Մարտիրոսը, Մեսրոպը եւ այլն»²³: Դարձեալ դիւանական փաստաթղթերից եւ յուշագրութիւններից քաղած նիւթերի վրայ հիմնուելով, պատմաբան Համլէտ Գէորգեանը նշում է, որ Դրոյի հրամանով Դալի Ղազարի, Եապօնի, Տիգրանի հարիւրեակներն ու Մարտիրոսի վաշտը Նժդէհի ընդհանուր հրամանատարութեամբ Շատախի վրայով արշաւում են Մոկս, գրաւում քաղաքը, որից յետոյ Դրօն Մոկսի պաշտպանութիւնը յանձնելով Նժդէհին՝ իր զօրամասի հիմնական ոյժերով տեղափոխւում է Աղթամար²⁴:

Խմբապետ Մարտիրոսը յիշում է. «Մայիսի 6-ին, կէսօրին թողեցինք Վանը...

Մեր յաջորդ կայանը Շատախն էր:

Շուրջ տասնըիւնգ օր մնացինք Շատախում...

...Դալի Ղազարին կարգադրեց կէս վաշտով անցնել Ռշտունիք, տեղափոխել ժողովրդին իր բնակավայրերում եւ ապա անցնել Մոկս: /.../ Այնուհետեւ Մոկս անցաւ մաւ Նժդէհը՝ Օնէի վաշտով»²⁵: Մարտիրոսը յետագայում նշում է թէ Մոկսում Նժդէհի կողմից գաւառապետ էր նշանակուել Մոկացի Գրիգորը²⁶:

Քոչարեանը նոյն իրադարձութիւնների մասին պատմում է հետեւեալը. «Նժդեիը, հետը առած Մեսրոպի եւ Մարտիրոսի վաշտերը, մեկնեցաւ դէպի Մոկս: Մինչ այդտեղ հասնելը, մերոնք կ'ունենան մէկ քանի կռիւներ, որոնցմէ ամէնէն աւելի նշանակելին Սեօքան գիւղինն է: ... Մեսրոպը իր վաշտով Կախրի (sic! - Ռ.Հ.) հասնելով, թշնամու ուժերու Սեօքանի մէջ կեդրոնացած ըլլալու լուրը կ'իմանայ գիւղացիներէն: Հաւաքելով (Կախրի - Ռ.Հ.) գիւղին գէնք վերցնելու ընդունակ երիտասարդութիւնը, միացուցած իր վաշտին, աւելի մեծ ուժով դէպի Սեօքան յառաջանալով, գիշերը կը պաշարէ գիւղը:

...Մենք Շատախն էինք տակաւին, երբ հետեւեալ գրութիւնը ստացայ Նժդեիէն.

Սիրելի Ղազար,

Մեսրոպը Կախրի շրջանն է: Սեօքանի կողմը ուժեղ կռիւներ տեղի կ'ունենան. թշնամին բաւական ուժ կեդրոնացած ըլլալով, ուժեղ դիմադրութիւն ցոյց կուտայ. գրութիւնս ստանալուդ անմիջապէս օգնութեան հասիր:

Բարեւներով՝ Նժդեի:

Մոկս, 1 յունիս, 1915»²⁷:

Յետագայ իրադարձութիւնները հետեւեալ կերպ է նկարագրում Կարապետեանը. «1915թ. Յունիսի կէսերին, Դրօն յիսունի հասնող հեծեալներ թողնելով Գիրանի դաշտում, այնուհետեւ մէկ հետեւակ ջոկատ Շատախում եւ մի վաշտ էլ Մոկսում, 3/4 վաշտով, այսինքն հինգ ջոկատով եւ մէկ հեծեալ խմբով միանալով 1-ին, 3-րդ եւ 4-րդ հայկական խմբերին, մի շարք կատաղի կռիւներ տուեց Սորփի եւ Դատուանի շրջաններում: Այնուհետեւ, շտաբի հրամանով հայկական 2-րդ խումբը շտապ վերադարձաւ Բերկրի-Կալա, այստեղ մի քանի օր կարողացաւ դիմադրել թշնամու գրոհները, որը յարձակումներ էր գործում Արճէշի կողմից: Այդ ժամանակ 2-րդ հայկական խումբն ապահովեց Շատ Բերկրիի ճանապարհով Արեւելեան Հայաստան անցնող 200.000 հայ գաղթականութեան անվտանգութիւնը...

...Սակայն, 1915թ. Յուլիսի 16-ին, մարտական գործողութիւնների թէժ պահին, Կովկասեան Բանակի հրամանատարութիւնը ռուսական բոլոր զօրքերին եւ զօրաջոկատներին հրամայեց թողնել նախկինում գրաւուած տարածքները, ինչպէս նաեւ Վանը եւ նահանջել... Համատարած նահանջի ակիքները 1915թ. Յուլիսին հայկական 1-ին եւ 2-րդ խմբերին բերեցին Իզդիր...

...Վարդանի գլխաւորած Արարատեան Զօրաջոկատը, որը փայլուն աւարտեց Վանի Օպերացիան եւ հերոսական յաղթանակներ ունեցաւ

Մայիսի 10-ից Յուլիսի 19-ը Վան-Բիբլիս քաղաքում շուրջ երկու ամիս տևած մարտական գործողություններում՝ վերջնականապես կազմալուծուեց:

Արիմահեղ կոիւնների եւ մեծ զոհողությունների գնով ձեռք բերւած մարտական յաղթանակների կորստից յոսալքուած ու ճնշուած հայ կամաւորականները՝ յատկապէս արեւմտահայերը, քողնելով զինուորական ծառայութիւնը, սկսեցին ցրուել... Կամաւորների շարքերը շարունակեցին անդադար չօտրանալ եւ 1915թ. Օգոստոսին, հայկական բոլոր չորս խմբերում եղած մօտ 4000 կամաւորականներից մնացել էր ընդամենը 1200 մարդ: Չնայած դրան, Ազգային Բիւրօն, որը եւս խիստ հիասթափուած ու յուսալքուած էր ռուսական հրամանատարութեան անսպասելի գործելակերպից, որոշեց անկախ ամեն բանից, վերականգնել հայկական կամաւորական խմբերը եւ շարունակել Թուրքիայի դէմ պայքարի գործը...

1915թ. Օգոստոս-Նոյեմբեր ամիսներին հայկական կամաւորական խմբերը վերակազմաւորուեցին...

1915թ. աշնանը եւ 1916թ. ձմրան ամիսներին ռուսական Կովկասեան Բանակը նորից անցաւ վճռական գործողությունների»²⁸:

Այսպիսով, պարզուրում է, որ Նժդէ՛հը ոչ միայն անմիջականորէն մասնակցել է Սորբի, Բերկրի-Վալալի եւ այլ բնակավայրերի կոխիւններին, այլ լեւ արժանացել քաջութեան չքանչանների: Աւելին՝ իր օգնական Մեսրոպի Հետ միասին, Նժդէ՛հը ղեկավարում էր Շատախի եւ Գորանդաշտի ազատագրումն ու պաշտպանութիւնը: Ռուսական զօրքերի նահանջից յետոյ, Նժդէ՛հն է իրականացրել Մոկաից, Շատախից եւ այլ բնակավայրերից տեղահանուած, Ալաշկերտի շրջանում խոնուած հազարաւոր արեւմտահայ գաղթականներին պաշտպանելու, նրանց Բերկրի-Վալալով դէպի Արեւելահայաստան նահանջելու գործողութիւնը:

Հայ կամաւորականների նահանջի ու արեւմտահայերի այս գաղթի մասին վկայում է նաեւ Քոչարեանը. «Երեկոյեան հասանք Արմէշ... Չորս օրուան երկար հանգիստէ մը յետոյ, անցանք Բերկրի Ղալա: Միւս զօրամասերն ալ մեզի հետ միաժամանակ սկսած էին նահանջել լճի հարաւային ափով: Նժդէհը եւ Մեսրոպը, Մոկաի, Կառկառի, Գէօրան դաշտի, Շատախի եւ Վանի հայերը տեղահան ընելով, տեղական ուժերու հետ միասին կուգային մեզ միանալու... Այսպէս շարունակուեցաւ չորս օր անդադար, մինչեւ վերջին կարաւանին հետ միասին Բերկրի ժամանեց նաեւ Մեսրոպը իր վաշտով: Օր մը առաջ եկած էր նաեւ Նժդէհը, որ հիւանդացած էր տիֆոյով: Նախնական անհրաժեշտ օգնութիւնը հասցնելով իրեն, ճանապարհ դրինք դէպի Երեւան:

Յուլիսի վերջերուն էր, երբ գաղթականութեան հետ միասին Իգդիր հասանք»²⁹ :

Դժբախտաբար, առաջժ մեզ չի յաջողուել փաստեր յայտնաբերել Նժդեհի 1915ի Յուլիս-Դեկտեմբեր երկարող ժամանակաշրջանի գործունէութեան մասին եւ թէ ե՛րբ եւ ինչպէ՛ս նա Արարատեան Գնդից 1915ի Դեկտեմբերին վերապայտնուեց կամաւորական հինգերորդ խմբի կազմում:

ՆժԴԵՀՆ ՈՒ ԿԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԳՆԴԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԽՈՐՈՒՄԸ. ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1916ԻՆ

Ռուսաստանի Նիկոլայ Բ. կայսրը, որը դեռեւս 1915ի Դեկտեմբերի կէսերին էր ստորագրել հայկական կամաւորական զնդերը ցրելու մասին յոյժ գաղտնի հրամանագիրը, իր որոշումն իրագործել սկսեց 1916ի Մարտի երկրորդ կէսից: Ցարական իշխանութիւնները այս քայլին դիմեցին երբ Արեւմտահայաստանը փաստօրէն հայաթափուել էր: Հայոց զինական ոյժը կազմալուծելու, այն սեփական հայեցողութեամբ օգտագործելու, թուրքահայաստանն ազատելու վճռական գործողութիւններից հայկական զօրամասերին հեռու պահելու իրենց մտադրութիւնը կոծկելու նպատակով, Կովկասեան Բանակի հրամանատարութեան՝ 1916ի Մարտի 13ի հրամանով որոշուեց հայոց կազմացրեալ կամաւորական ինքնուրոյն խմբերի փոխարէն հայ հրամանատարների գլխավորութեամբ ստեղծել վեց հրաձգային գումարտակներ ու նրանց վերաբաշխել ռուսական բանակի տարբեր զօրամասերի մէջ³⁰:

Նժդեհը, որը կամաւորական խմբերը կազմացրելու պահին հինգերորդ խմբի կազմում էր, հայկական առաջին զօրագնդի 1916ի Մայիսի 14ի հրամանով, որպէս հրամանատարի օգնական, տեղափոխուեց Բիթլիսի շրջանում գտնուող այն զօրագունդը, որի հրամանատարը 1916ի Մարտի 18ից Սմբատ Բորոյեանն էր: Անդրանիկը առաջին զօրագնդի հրամանատարի պաշտօնից հեռացել էր հայոց կամաւորական զնդերը ցրելու ռուսական հրամանատարութեան գործողութիւնների, ինչպէս նաեւ հայ կամաւորութեան սխրանքներն ու անօրինակ քաջագործութիւնները դիտաւորութեամբ անտեսելու, դրանք ռուսական զօրամասերին վերագրելու քաղաքականութեան այլեւս հանդուրժել չկարողանալու պատճառով: Անդրանիկը յայտարարում էր, որ երդուել է այլեւս որեւէ գործ չունենալ ռուս հրամանատարութեան հետ: Իսկ ռուսական հրամանատարութեանն 1916ի Մարտի սկզբին ուղղած իր գրութիւնում Անդրանիկն իր հեռանալը պատճառաբանում էր նաեւ խիստ քայքայ-

ուած առողջութիւնը վերականգնելու անհրաժեշտութեամբ՝ միաժամանակ պահանջելով արձակուրդ տալ նաեւ մօտ երկու տարուայ անհաւասար ու մշտական մարտերում յոգնած եւ հիւծուած իր խմբին: Մարտի 18ին հրաժեշտ տալով խմբին, Անդրանիկը հրամանատարութիւնը յանձնում է Սմբատին, մեկնում Թիֆլիս³¹, ուր ժամանում է Մարտի 25ին:

Նժդեհի ծառայողական ցուցակում նշուել է. «Հինգերորդ Զօրագունդը Հայկական Չորրորդ Հրաձգային Գումարտակի վերակազմաւորուելու առիթով, ցանկանալով որքան հնարաւոր է շուտ հասնել առաջատար դիրքեր, պորուչիկը որպէս զօրագնդի հրամանատարի օգնական տեղափոխուեց (Հրաման՝ Հայկական Առաջին Զօրագնդի, թիւ 135, 14 Մայիսի 1916, Կովկասեան Բանակ):

Նժդեհը նոր պաշտօնում որպէս ռազմականատրական գործի շնորհալի եւ փորձառու գործիչ կարողացաւ շատ սեղմ ժամկետում զօրագնդին ներշնչել կարգապահութեամբ ու ոգետրել, զօրագունդը բարձրացնել ինչպէս բարոյական, այնպէս էլ մարտունակութեան առումներով»³²:

Այս իրողութիւնը հաստատում եւ կամաւորական առաջին խմբի կազմում Նժդեհի ղեկավարած գործողութիւններից մէկը նկարագրում է Նոյն գնդի ռազմիկներից՝ ամերիկահայ կամաւոր Խորէն Մուրադեանը, որը 1916ին մասնակցել է թէ՛ Նժդեհի անցկացրած վարժանքներին եւ թէ՛ յիշեալ գործողութեանը. «Ապրիլի 29ին տեղափոխուեցինք Ալպերդ գիւղը... Մինչեւ Մայիս 17ը կերակրուեցինք միայն կրիայի մսով: Մայիսի 20ին մեզ մօտ հասաւ սուազցի Մուրադը եւ որոշ ժամանակ կառավարեց մեր գումարտակը, որովհետեւ Սմբատը կարելի չէր յանձնարարութեամբ Մուշ էր գնացել...

Ամսի 20ին մեզ մօտ եկան Սեպուիը եւ Կայծակ Առաքելը: Երբ Սմբատը Մուշից վերադարձաւ, Մուրադն ու Սեպուիը գնացին Բիթլիս եւ զբաղուեցին հայերին ազատելու գործով՝ «մէկ հաց (հաւանաբար՝ հայ-Ռ.Հ.), մի ոսկի» նշանաբանով:

Այդ օրերին մեր բանակն եկաւ նաեւ Նժդեհը՝ մարզելու մեզ»³³:

Այս ժամանակահատուածում Նժդեհի մասնակցած մարտական գործողութիւնների մասին նրա ծառայողական ցուցակում նշուել է. «Զօրավար (Թովմաս) Նազարբեկովի ջոկատի կազմում մասնակցել է հետեւեալ մարտերին. Էվրիս (23 Յուլիսի 1916), Մագրեադ (գիւղ էրզրում գաւառում՝ Ռ.Հ.):

Յուլիսի 22ին մեր աջ զօրաթելի նահանջից յետոյ զօրագնդի առաջին դասակը շրջապատուեց ասկեարներով: Այդ մասին իմանալով՝ պորու-

չիկ Նժդեհը վերցրեց 30 հեծեալների եւ Գեգալ-Դերա-Սուի աջ ակով շարժուեց Մագրեադ. Սեւանի բարձունքի կէս ճանապարհին, որն արդէն գրաւուած էր հակառակորդի կողմից, դասակը գնդակոծուեց, սակայն չնայած ակնյայտ վտանգին, Նժդեհը ետ չվերադարձաւ, այլ ընդհակառակը, թշնամու տեղատարափ կրակի ներքոյ մարտանցում կատարեց Մագրեադի կիրճով եւ անսպասելիօրէն յայտնուեց յարձակուող հակառակորդի ձախ թեւում, որով թուրքերին ստիպեց կասեցնել յարձակումը եւ կրակը ուղղել հեծեալների կողմը՝ առաջին դասակին հնարաւորութիւն տալով առանց էական կորուստների նահանջել: Այդ գերազանց հերոսութեան համար Նժդեհը ներկայացուեց Գէորգիւեան երրորդ աստիճանի խաչի:

Խումապի ընթացքում (25 Յուլիսի 1916) թշնամին թողեց երկու գնդացի, ձիեր, գումակ, վիրատրներ եւ ռազմական այլ իրեր: Օգտուելով խումապից, հակառակորդը երեք անգամ փորձեց մտնել գիւղ, սակայն ամէն անգամ էլ ետ շարտուեց: Այդ գերազանց սառնասրտութեան եւ անվեհերութեան համար Նժդեհը ներկայացուեց Գէորգիւեան երկրորդ աստիճանի խաչի (գեկուցագիր թիւ 397):

Դադուին՝ 7 Օգոստոսի 1916

Բորիան՝ 15 Օգոստոսի 1916»³⁴:

Դատուանի (ծառայողական ցուցակի համաձայն՝ Դադուին) ճակատամարտի եւ նրանից կարճ ժամանակ յետոյ կամաւորական խմբերի ցրման մասին Մուրադեանը յիշատակում է. «Երբ զօր. Նազարբեկովը Մուրատի եւ Սեպուիի հետ Բիթլիսը մաքրելով՝ հասաւ Դատուան, անմիջապէս բանտարկել տուեց Դատուանի ռուս կոմենդանտին (պարէտին - Ռ.Հ.), որի հրամանով էին վառել պահեստները: Իսկ խոտերի մէջ մնացած թնդանօթներն ազատելու համար, Սմբատի կարգադրութեամբ, Նժդեհը մի խումբ ձիաւորներով եւ երկու գումարտակ ռուս զինուորով գնացինք դէպի Կիւզլըարէ եւ, թշնամու հետ կռիւ ունենալով, չորս թնդանօթներն էլ ազատեցինք ու մեծ դժուարութեամբ հասանք Կամուրջ, որտեղ Համազասպն էր...

Այնուհետեւ տեղի ունեցաւ անսպասելին: Ռուս կառավարութիւնը ... 1916ի կէսերին ... կազմալուծեց մեր կամաւորական զօրքը որից յետոյ կամաւորները ցրուեցին զանազան ուղղութեամբ»³⁵:

1916ի Սեպտեմբերին, երբ հայկական կամաւորական խմբերն արդէն կազմացրուած էին, հայկական բոլոր եօթը կամաւորական խմբերը լուծարուեցին: Միայն Անդրանիկի հրամանատարութեամբ գործող առաջին խմբի լուծարումն էր, որ որոշ ժամանակով յետաձգուեց: Այսուհանդերձ, լուծարման պաշտօնական հրամանի արձակումից յետոյ, Անդրա-

նիկը Թիֆլիսից Սմբատին ու Համազասպին հրահանգեց իրենց զորամասերով վերադառնալ Երեւան³⁶ :

Նժդեհը հաւանաբար Համազասպի հետ է վերադարձել Արարատեան Դաշտ ու աֆտեղից, մինչեւ Գիւմրի մեկնելը, կարճ ժամանակով Համազասպի հետ գնացել է իր հայրենի Կզնուտ գիւղը, ուր նրանց տեսել է Նժդեհի քրոջ որդի Սիմոն Բաբայեանը: Դժբախտաբար, յուշագիրը չի նշում Նժդեհի Կզնուտ այցելութեան ամիսը³⁷ : Ենթադրում ենք, որ Նժդեհը՝ Սմբատի խմբի հետ, վերադարձել է Կովկաս մօտաւորապէս 1916ի Հոկտեմբերին եւ ամենայն հաւանականութեամբ Սմբատը նենց Թիֆլիսում է 1916ի Հոկտեմբերի 21ին ստորագրել Կովկասեան Բանակի Գլխաւոր Շտաբից Նժդեհին տրուած ծառայողական ցուցակը, քանի որ Կովկասեան Բանակի շտաբը գտնուում էր Թիֆլիսում:

1917ի Մայիսի 3ին, Նժդեհը՝ Ռուսաստանեան Փետրուարեան Յեղափոխութիւնից յետոյ ստեղծուած Անդրկովկասի Յատուկ Կոմիտէի նախագահ Վասիլի Ակիմովիչ Խարլամովին գրած նամակում հաղորդում է, որ «քաղաքական յեղաշրջման նախօրէին հարց եմ բարձրացրել նոյն (պորուչիկի - Ռ.Հ.) կոչումով ռուսական բանակ տեղափոխուելու մասին:

Իմ գեկուցագրի վրայ Կովկասեան Բանակի շտաբի պետը մակագրել է. «Բուլղարական ծառայութեան պորուչիկ Գ. Նժդեհի տեղափոխման հարցը առժամանակ յետաձգել մինչեւ հայկական բոլոր կամաւորական զօրագնդերի վերակազմատրելը կանոնաւոր զօրամասերի»:

...Սակայն մինչ յեղաշրջումը եւս այդ հարցը երկրորդ անգամ չեմ բարձրացրել այն պատճառով, որ ես քաղաքական գործով (ըստ յօդուած 102ի) ամբողջ երեք տարի արգելափակուած եմ եղել Պետրոգրադում, համոզուած եմ եղել, որ ինձանից կը պահանջեն քաղաքական բարեյուսութեան վկայական, ինչը ներկայացնելու ի վիճակի չեմ եղել»³⁸ :

ՆժԴԵՀԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ 1917ԻՆ

1917ի սկզբին՝ Ռուսաստանում ցարերի իշխանութեան վերջ տուող Փետրուարեան Յեղափոխութեան նախօրեակին, Նժդեհը գալիս է Ալեքսանդրապոլ³⁹ , որտեղ, Տիգրան Դեւոյեանցի վկայութեամբ, «վարժեցնում էր հայ կամաւորներին եւ ունէր տեղակալի աստիճան (Second Lieutenant)»⁴⁰ :

Ալեքսանդրապոլի Արդուլթեան Օրիորդաց Դպրոցի տեսուչ Եփրեմ Սարգսեանի յուշերից պարզուում է, որ Փետրուարեան Յեղափոխութիւ-

Նից յետոյ Նժդեհն ընտրուել է քաղաքում կազմակերպուած առաջին գործադիր մարմնի ղեկավար կազմում. «Մի օր էլ, պատահմամբ, Արդուքեան դպրոց գալով, տեսայ, որ դասարաններից մէկում տիկիները ժողովի են հաւաքում...

Ներս մտաւ մի երիտասարդ, դուրեկան արտաքինով զինուորական: Նժդեհն էր, որին պատահում էի առաջին անգամ: Դասախօսութիւնից յետոյ, հրաւիրեցի նրան տեսարան: Պարզունց, որ Նժդեհը տեսակցութիւններ է ունեցել մեր նորեկ հայրենակիցների հետ եւ ուզում է նրանց համար որեւէ ղեկավար մարմին ստեղծել՝ նրանց ներքին կեանքը կարգի բերելու եւ կանոնաւորելու համար:

Յայտնեցի իմ համամտութիւնը եւ անցանք գործի:

Շուտով կազմուեց Տարօն-Տուրութեան անուանով հայրենակցական մի միութիւն, որի ժողովների վայրը պիտի լինէր Արդուքեան դպրոցը: Ընտրուեց միութեան վարչութիւն, որի անդամներից յիշում եմ խմբապետ Սմբատ Բորոյեանին, Նժդեհին եւ Յակոբ Տէր Զաքարեանին: Միւսների անունները մտքիցս խուսափում են: Տէր Զաքարեանին ընտրեցին քարտուղար, իսկ ինձ՝ նախագահ...

Նժդեհի հետ մեր յարաբերութիւնները սերտացան... Շուտով նա կազմակերպեց մի ցերեկոյթ Տարօն-Տուրութեան Հայրենակցական Միութեան Արիւստանոցի օգտին, Ալեքսանդրապոլի թատրոնի շէնքում:

Նժդեհը պատրաստել էր որբանոցի մեծ սաների մշեցիական-հայկական պարերը, ինչ որ խանդավառեց հանդիսականներին: Նա դարձաւ նաեւ մեր ժողովրդական հաւաքոյթների հռետորը եւ իր յուզիչ խօսքերով սիրելի մարդը ալեքսանդրապոլցիների համար...

Եւ մի օր էլ պարզ երկնքից կայծակը ճաթեց: Այդ՝ 1917-ի Փետրուարի 27-ին էր: Ռուսիոյ միահեծան եւ հզօր ինքնակալութիւնը տապալուած էր: Նիկոլայ Բ.ը գահազուրկ էր եղած, միապետական կարգը փոխարինուած էր յեղափոխական իշխանութեամբ...

Թիֆլիսից եկել էր ոմն Բէկ-Փիրումով՝ յեղափոխական լիազօրութիւններով օժտուած: Քաղաքային տան դահլիճում գումարուեց ընդհանուր ժողովրդական մի հաւաքոյթ: Փիրումովը տուեց իր զեկուցումը եւ առաջարկեց ընտրել 32 հոգուց կազմուած մի մարմին, որը պիտի կոչուէր Գործադիր Մարմին, եւ բաժանուէր յանձնաժողովների: Սրանք պիտի կատարէին քաղաքի գործերը: Հրահանգը բոլորում էր Թիֆլիսի «Արտակարգ Կոմիտէ»-ից:

Այս մեծ շէնքում հաւաքուած էր ամբողջ Ալեքսանդրապոլը...

Գործադիր Կոմիտեի անդամ ընտրուեցին մեծ մասամբ մտաւորական ուժեր եւ ուսուցիչներ: Մեր (Հ. Յ. Դաշնակցութեան - Ռ.Հ.) քեկնածուները մեծամասնութիւն էին: Ընտրուեցին՝ Յովակիմ Բուրաղեանը, Նժդեհը, ուսուցիչ Մացօն եւ ես: Միւսների անունները չեմ յիշում»⁴¹:

1917ի Մայիսի 3ին, Ալեքսանդրապոլի Գործադիր Կոմիտէի անդամ եւ քաղաքային կոմիտար Նժդեհը Խարլամովին յղուած վերոնշեալ նամակում խնդրում է նրա «միջնորդութիւնը պատկան ռազմական իշխանութիւնների առջեւ՝ ինձ նոյն (պորուչիկի - Ռ.Հ.) կոչումով ռուսական սպայ վերանուանելու համար»⁴²: Ինչպէս նախապէս նշուել է, Նժդեհը նոյնատիպ խնդրանքով դիմել էր մինչեւ յեղափոխութիւնը:

Անդրկովկասի Յատուկ Կոմիտէի նախագահ Միքայէլ Պապաջանովի ստորագրութեամբ մի այլ վաւերագրում նշուում է, որ Նժդեհի միջնորդութեան բաւարարմանը կոմիտէի կողմից 5 Մայիսի 1917ին խոչընդոտների չի հանդիպել եւ թէ «Անդրկովկասի Յատուկ Կոմիտէն Պարոն Տէր-Յարութիւնեանի խնդրագիրը ուղղում է ի տնօրինութիւն»⁴³:

Հաւանաբար Նժդեհի կենսագրութեան այս հանգրուանին է վերաբերւում Նժդեհի կուսակցական թաւրիգեան դատաւարութեան (1921) առնչութեամբ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (ՀԾԴ) անհատ գործիչ է. Խանադաւանի կուսակցութեան Բիւրոյին (պատճէնը՝ Գերագոյն Դատական Ատեանին) յղած գրաւոր ցուցմունքի հետեւեալ հատուածը. «Ռուսաստան գնացող զօրքը թալանում էր (Ալեքսանդրապոլի - Ռ.Հ.) բերդի արսեմալը: Հայ Զինուորական Միութիւնն, որի նախագահն Ամասիա Սուքիասեանն էր (ճարտարապետ), երկար տանջում էր բերդի փրկութեան ճամբան գտնելու համար: Կարգադրուեց Նժդեհին բերդը գրաւել ռուսներից: Նժդեհը երեք ժամում հաւաքեց մօտ 60 ամէն հասակի ու հագուստի ուսանողների եւ բոլորովին անաղմուկ գրաւեց բերդը»⁴⁴: Հաւանաբար այս իրադարձութիւնը տեղի է ունեցել 1917ի վերջին:

Գլխավորի Առեւտրական Դպրոցի դահլիճում կայացած ՀԾԴ անդրանիկ ժողովը Մայիսի 14ին Նժդեհին ընտրել է կուսակցութեան Շիրակի կեդրոնական Կոմիտէի անդամ: Կոմիտէի միւս անդամներն էին Յովակիմ Բուրաղեանը, բժ. Արշակ Ղազարեանը, բժ. Տէրտէրեանը, Վարդան Վարդապետեանը, բանուորներ Մարտիրոս Ղանդիլեանը, Լ. Լալայեանը, տիկին Զարիֆեանը եւ Արարատ Տէր-Գրիգորեանը⁴⁵: Նոյն թուականի Յուլիսի 30ին, Նժդեհը՝ ՀԾԴ ցուցակով ընտրուել է Ալեքսանդրապոլի Քաղաքային Դոմայի «խրաւաստ»: 52 հոգիանոց այդ ցուցակում Նժդեհը հինգերորդն էր⁴⁶: 1917ի աշնանը, դարձեալ ՀԾԴ ցուցակով, Նժդեհը

միաժամանակ ընտրուել է 1917ի Սեպտեմբերի 27ից Հոկտեմբերի 13ը թիֆլիսում կայացած Հայոց Ազգային Համախորհրդակցութեան 228 պատգամաւորներից մէկը, ապա՝ Անդրանիկի, Աբրահամ Գիւլիսանդանեանի, Արսէն Շահմազեանի, Դրոյի, Ռուբէն Տէր-Մինասեանի եւ այլոց հետ ընդգրկուել Ճակատի Պահպանութեան Եւ Վտանգուած Վայրերի Ապահովութեան 20 հոգիանոց մասնաժողովի (սեկցիա) ՀՅԴն ներկայացնող 16 հոգիանոց խմբում⁴⁷:

Իրօք, որ Նժդեհի եռանդն աննախադէպ էր, եւ աշխատունակութիւնը՝ հսկայական: Յոյժ արժէքաւոր են այն վկայութիւնները, որ Նժդեհը նոյն ժամանակահատուածում ծաւալել է նաեւ մշակութային գործունէութիւն: Մասնաւորապէս, ինչպէս նշուեց վերեւում, նա՝ գաղթականների ինքնութիւնը պահելու, նրանց ոգին բարձրացնելու եւ հոգսերը թեթեւացնելու համար կազմակերպել է հայրենակցական միութիւններ, պարախումբ:

Ալեքսանդրապոլում բնակուելու ընթացքում, Նժդեհը թէ՛ այդ քաղաքում, թէ՛ Հայաստանի տարբեր բնակավայրերում ծաւալել է դասախօսական-քարոզչական ու կազմակերպչական ընդգրկուն գործունէութիւն: Զինայելով իր ոյժերը՝ նա գրադուում է թէ՛ կամաւորների հաւաքաժամամբ ու զինավարժութիւններով, թէ՛ գաղափարական-քարոզչական գրեթէ ամէնօրեայ աշխատանքով (դասախօսութիւններ, ելոյթներ, մամուլում տպագրած բազմապիսի յօդուածներ) եւ թէ՛ հասարակական-կազմակերպչական աշխատանքով՝ չհաշուած կուսակցական ղեկավար ատեաններում իր խիստ արգասաւոր ղերակատարութիւնը, ինչպէս նաեւ քաղաքային վարչութեան ղեկավար աշխատանքը: Նրա քարոզչական գործունէութեան ընդգրկումների մասին պատկերացում տալու համար բերենք իր դասախօսութիւնների մասին վկայող՝ մեր ձեռքի տակ եղած միայն չորս ամսուայ տուեալները: 1917ի Ապրիլի 9ից մինչեւ Յուլիսի 16ը Նժդեհը դասախօսութիւններով ու ելոյթներով Ալեքսանդրապոլում հանդէս է եկել Ապրիլի 17ին, 18ին, Մայիսի 15ին, 21ին, 24ին, 29ին, Յուլիսի 2ին, 11ին եւ 16ին⁴⁸:

Մայիսի 6ին Նժդեհը Երեւանում մասնակցել է նորաստեղծ Դասալքութեան Դէմ Կռուող Կոմիտէի կազմակերպած հանրահաւաքին եւ Անդրանիկից, Վահան Փափազեանից ու Դրոյից յետոյ ելոյթ է ունեցել այդ հաւաքում⁴⁹: Ժողովրդի ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու նպատակով նա այցելել ու ժողովներ է գումարել գիւղերում⁵⁰: Այսպէս, 1917ի ընթացքում գործողուել է Ախալքալակ, տեղում կազմակերպել կամաւորական ջոկատ⁵¹: Յունիսի 9ին Գողթանի վերին Ազա գիւղի կո-

միասարիատի դահլիճում Նժդեհը նախագահել է Վերին Ազալի, Ներքին Ազալի եւ Դեր գիւղերի հայ բնակչութեան ընդհանուր ժողովներին, յաջորդ օրը նոյնպիսի ժողով է գումարել տեղի ծխական դպրոցի դահլիճում, իսկ Յունիսի 16ին՝ Զուղայում: Ժողովներին արտասանած նրա ճառերը բազմիցս ընդհատուել են «որոտընդոստ ծափերով ու կեցցէներով»⁵²:

Նժդեհի ելոյթների հմայքն ու ազդեցութիւնը այնքան մեծ է եղել, որ գրեթէ բոլոր դասախօսութիւններից ու ելոյթներից յետոյ, շատերը, իսկ երբեմն՝ ամբողջ դահլիճը, անդամագրուել են ՀՅԴին ու կամաւորական ջոկատներին: Այդպէս եղաւ, օրինակ, Յունիսի 1ին Ալեքսանդրապոլի աշուղների համար նրա կարդացած դասախօսութիւնից յետոյ, երբ «տեղնուտեղը կազմակերպուեց ՀՅԴ «Աշուղ» խումբը»⁵³: Յունիսի 4ին ՀՅԴ Ալեքսանդրապոլի ակումբում, տեղի մի խումբ կանայք՝ լսելով Նժդեհի «Ռուսաստանի Յեղափոխութիւնը եւ Ազգային Հարցը» բանախօսութիւնը, կազմակերպեցին «Զոյր» անունով դաշնակցական խմբակ⁵⁴:

Հաղորդուում է, որ Ալեքսանդրապոլի Տարօն, Դուրան արհեստանոցներում եւ մի քանի որբանոցներում «աշխատանքները սկսում էին նրա գրած՝ «Արեւմտահայ Գաղթականի Բաղաքական «Հայր մեր» աղօթքով»⁵⁵: Յարմար ենք նկատում մէջբերել այդ աղօթքը. «Լսի՛ր, Տէ՛ր, հայրենագուրկ գաղթականն է քեզ կանչում: Լսի՛ր եւ մի՛ տանիք զմեզ ի փորձութիւն» մեր սուրբ երկրէն դուրս, օտարի դրանը, օտարի հացով երկար մնալու: Այլ բաց, Տէ՛ր, մեզ համար միշտ բաց պահիր բոլոր ճանապարհները դէպ Հայրենիք: Եւ մօտեցո՛ւր, Տէ՛ր, ո՛հ, փութացուր երջանիկ օրը մեր դարձի: Ամէն»⁵⁶:

Հիմնականում ժայռ թերթում է, որ «Դաշնակցութեան Պանթէօնը» եւ «Թերթօն» խորագրի տակ Նժդեհը հրատարակում է ազատամարտի հերոսներ Խէչոյի, Քեռու, Հրանտի, Աշուղի, Շրջիկ Զաւէնի, Արծիւ Լաթոյի եւ ուրիշների մասին արձակ սքանչելի գեղօցներ»⁵⁷, որոնք 21 էջանոց մի գրքոյկով Ալեքսանդրապոլում լոյս են տեսնում 1917ի վերջին⁵⁸: Ինչպէս նախապէս մի այլ տեղում նշել ենք, դրանք հայ «գրականութեան մէջ ինքնուրոյն տեսակ են սկզբնաւորում եւ կարող են կոչուել գեղարուեստական հրապարակախօսութիւն կամ վարքագրութիւն»⁵⁹:

Նոյն ժայռ թերթում, նաեւ Թիֆլիսի Խաթարալա, Ընկեր, Պատանի, եւ Հորիզոն թերթերում՝ Գար. Դարդունի, Գ. Դարդունի եւ Studiosus ստորագրութիւններով, Նժդեհը տպագրել է բազմաթիւ քերթուածներ,

մեծ մասամբ՝ արձակ բանաստեղծություններ, որոնք մենք հայ արձակ քերթութեան լավագոյն նմոշներէից ենք համարում:

Կամաւորներին զինուորական գիտելիքներ տալու եւ զինավարժութեանը խթանելու համար Նժդեհն ու Շերամը 1917ին համատեղ գրել են *Զօրաշարժային Կանոնադրութիւն* գրքոյկը, որը 1918ին հրատարակուել է Ալեքսանդրապոլում⁶⁰: Այդ աշխատութիւնը Անդրանիկի կազմած նոյնատիպ աշխատութիւնից յետոյ երկրորդն էր հայ իրականութեան մէջ:

ՆժԴԵՀԸ 1918ԻՆ ԹՈՒՐԳԱԿԱՆ ԶՕՐՔԵՐԻ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ ՆԵՐՈՒԺՄԱՆ ՕՐԵՐԻՆ

Հոկտեմբերեան Յեղափոխութիւնից յետոյ, օգտուելով ռուսական զօրքերի Կովկասեան Ռազմաճակատը աստիճանաբար լքելու փաստից, թուրքական հրամանատարութիւնը 1918ի սկզբում ամբողջ Կովկասեան ճակատով յարձակման անցաւ:

Մինչ ռազմական գործողութիւնների վերսկսուելը, Նժդեհը 1918ի Յունուարին դարձեալ եղել է Երեւանում: Այդ մասին է վկայում Երեւանում լոյս տեսնող դաշնակցական *Ջանգ* թերթի 1918ի Փետրուարի 6ի տեղեկատուութիւնը. «Երեքշաբթի, Յունուար 30-ին, Քաղաքային Ակումբի դահլիճին մէջ, տեղի ունեցաւ երեսնաքնակ Գողթն ու Նախիջեւան գաւառացիներու ընդհանուր ժողովը, խորհրդակցելու համար նոյն շրջաններու մէջ տիրող ներկայ անապահով կացութեան մասին: Գեղեցիկ զուգադիպութեամբ մը նոյն ժողովին ներկայ էր նոյնպէս ընկեր Գարեգին Նժդեհը, որ ժողովը բացաւ յուլած շեշտով մը՝ ողջոյնի խօսքեր ուղղելով ներկաներուն, որոնք երկու մեծ հայրենասէրներու, անմահ Քրիստափորի եւ դիւցազն Խէչօյի հայրենակիցները կոչուելու բաղդն ունէին: Խօսելով ներկայ մոմենտի շուրջը՝ երեսան հանեց այն ծանր եւ ճգնաժամային կացութիւնը, ուր կապրին ներկայիս անոնք: Ի վերջոյ, շեշտելով անհատներու մեծ դերը ազգերու կեանքին մէջ, կոչ ըրաւ ներկաներուն համախմբուիլ, կապ հաստատել հայրենակիցներու հետ, փարիլ ինքնապաշտպանութեան կուռ շարքերով, դիմագրաւելու համար այն վտանգը, որ դամոկլեան սուրի նման կախւած է մեր գլխին»⁶¹:

Նժդեհը թուրքական ներխուժման ժամանակ գտնուում էր Ալեքսանդրապոլում եւ հեծելավաշտի հրամանատար էր: Թուրքերը Ալեքսանդրապոլին մօտենալու ժամանակ նա իր խմբով ծառայութեան անցաւ Նազարբէկեանի (Նազարբէկով) հրամանատարութեամբ գործող Հայկական Կորպուսի կազմում՝ ընդհուպ մինչեւ Մայիսի 16ին Ալեք-

սանդորապուլի անկումը եւ ապա՝ Ղարաքիլիսայի ճակատամարտի աւարտը:

Առաջին Աշխարհամարտի այս հանգրուանին, յատկապէս՝ 1918ի Ապրիլ եւ Մայիս ամիսներին վարած իր մարտական գործողութիւնների վերաբերեալ Նժդեհը 1944ի Սեպտեմբերին, Սոֆիայում, այսինքն՝ Երկրորդ Աշխարհամարտի աւարտական հանգրուանում Բուլղարիայի խորհրդային զօրքերի կողմից գրաւումից յետոյ, բայց իր ձերբակալութիւնից կարճ ժամանակ առաջ գրուած ինքնակենսագրութեան մէջ նշել է թէ «անցեալ համաշխարհային պատերազմի ... կռիւների ... վերջին շրջանում» ղեկավարել է «հայ-եգիպական մի առանձին զօրամաս», «սակաւաթիւ ուժերով օգնութեան ... փութացել պաշարած Կողբին եւ փրկել այդ շրջանի հայութեանը»: Նժդեհը այդ գրութեան մէջ շարունակել է. «այդ միեւնոյն օրերին անցել եմ Աբբաս Գիւլ, կապել եգիպտերի հետ եւ հետս առնելով վերջինների առաջնորդ Իւո բեգին, վերադարձել եմ Տփլիսի եւ նրան կապի մէջ դրել Հայոց Ազգ. Խորհրդի հետ: Հայաստանի անկախութեան նախօրեակին վարել եմ Ալաջայի կռիւները, որոնցով կարելիութիւն ընձեռել Էրզրում-Մարիդամիշ-Ղարսէն նահանջող հայկական զօրամասերին՝ անկորուստ անցնելու Ալեքսանդրապօլ, եւ Արփաշայը կտրել անցել եմ միայն այն ժամանակ, երբ վերջին նահանջող հայ զինուորի հետ իմ մարդկանց յաջողեց փոխադրել Անիէն պրոֆ. Մառ-ի պեղումների արդիւնքը հանդիսացող արժէքատու հնութիւնները»⁶²:

Խորհրդային զօրքերի կողմից ձերբակալութիւնից յետոյ եւս, Մոսկուայի Լուբրանկայի բանտում անցկացուած մի հարցաքննութեան ընթացքում Նժդեհը մի անգամ եւս վերյիշել է, որ 1918ին Քիւլփիսում (այսինքն՝ Սուրմալուի շրջանի Կողբ բնակավայրում - Ռ.Հ.) եւ Ալաջայում շրջափակումից փրկել է հայերին եւ եգիպտերին⁶³:

Կարսի մարզի Կաղզուանի շրջանի Ալաջա գիւղը ընկած էր հայ Բագրատունիների միջնադարեան մայրաքաղաք Անիից երկու կիլոմետր հարաւ-արեւմուտք: Է. Պանաղալեանը Ալաջայի արշաւանքի եւ Կողբի կռիւներում Նժդեհի քաջագործութիւնների մասին վկայում է. «Տաճիկները մօտենում էին Կարսին: Բէկլի-Ահմէդի մօտերքում մերոնք կուում էին ամենայն քաջութեամբ: Կուսակցութիւնը հրահանգեց Նժդեհին ... Ախուրեանն անցնելով մաքրել մեր զօրքի ձախ թեւն, Ադա դադա (Բերնա) սարի վրայով անցնել թշնամու թիկունքը: Չորս օրում կազմակերպեց եւ վեց օրում արդէն Ագարակի մօտերն էր, երբ մերոնք թողին Կարսն ու նահանջեցին: Նահանջեց եւ Նժդեհն՝ իր հետ ազատելով

150 հազարից ատելի Նախիջեւանի շրջանի հայերին ու եզիդներին՝ ապահովելով մեր նահանջող զօրքի ձախ թեւն, որի շնորհիւ թշնամին չկարողացաւ մեր զօրքի ճանապարհը կտրել, գերել կամ կոտորել։ Կողքի արշաւանքը։ Այս արշաւանքը մեծ կարեւորութիւն ունեցաւ այն տեսակետից, երբ հայ ժողովուրդն ամէնուր հալածուում էր, օգնութիւն ոչ ոքից չէր ստանում, Նժդեիը կարողացաւ մեզ կապել մի ժողովուրդ, որը մեր վարած կռիւներին մեզնից գոհերի քանակով ետ չմնաց։ Դա եզիդների զինակցութիւնն էր, որ յաջողուեց Նժդեիին ասհազին թուրք զիւղերի վրայով գնալ Գիւլլուջա, հրաւիրել Եուսուֆ բէկին, ծանօթանալ, բանակցել եւ ապա վերադառնալ Կողքի վրայով Ալեքսանդրապոլ, որտեղից եւ Տփլիս։ Վերադարձաւ Եուսուֆ բէկի հետ գոհ սրտով՝ զինակցած»⁶⁴։

Բեռլինում 1942ին հիմնուած Հայոց Ազգային Խորհրդի անդամ Ալֆրէդ Մուրադեանը գերմանական իշխանութիւնների խնդրանքով Նժդեհի մասին 1950ականների վերջին գրած տեղեկատուութեան մէջ այս կապակցութեամբ նշում է. «Երբ Ռուսաստանում յեղափոխութիւնից յետոյ ռուս զինուորները Լենինի կոչով մերկացրեցին ճակատը, հայկական փոքրաթիւ կամաւորական ջոկատները չկարողացան պահել ճակատը, եւ նահանջեցին։ Թուրքերը հասան մինչեւ Այսրկովկասի ռուս-թուրքական սահմանը։ Այդ ժամանակ Նժդեհն իր զինակիցներով մտնում էր հայկական զիւղերը, ժողովրդին հաւաքում էր հրապարակները եւ ազդեցիկ ճառերով ճակատից փախչող զինուորներին, նաեւ տուեալ զիւղերի բնակչութեան որոշ մասին ոգետրում, ուղարկում էր ճակատ։ Նա ոգեշնչում էր նաեւ եզիդներին։ Իր զինակիցների հետ մտնելով եզիդական մի զիւղ, զիւղացիներին հաւաքում է հրապարակ, վեր պարզելով Ս. Սարգսի պատկերը, որին պաշտում էին նաեւ եզիդները, հրաշունչ ճառով նրանց եւս համախմբում է իր շուրջը եւ 250 զինուած եզիդների գլուխն անցած՝ տանում է ճակատ»⁶⁵։

Վերջապէս, Խորհրդային բանտ նետուած Գէորգ Ղազարեանի ցուցմունքից պարզուում է, որ Նժդեհը Ղարաբլիխայի ճակատամարտի նախօրէին՝ մօտաւորապէս 1918ի Ապրիլին «կուում էր Ալեքսանդրապոլ մտած թուրքերի դէմ։ Երբ թուրքերը գրաւեցին Ալեքսանդրապոլը, նա նահանջեց Ղարաբլիխա եւ այնտեղ կռուեց թուրքերի դէմ»⁶⁶։ Խօսքն այստեղ Ղարաբլիխայի (Ներկայումս՝ Վանաձոր) ճակատամարտի մասին է, որը, ինչպէս գրել ենք մեր մէկ այլ յօդուածում, ոգեշնչել, կազմակերպել ու վարել է Նժդեհը⁶⁷։

- ¹ Տե՛ս օրինակ՝ Աւօ, Նժդեհ. Կեանքն Ու Գործունէութիւնը, Նշխարներ, Վկայութիւններ, Պէյրութ, տպարան Համազգային, 1968, էջ 51-65; Ռաֆայէլ Համբարձումեան, Վարք Նժդեհի. Առոյթներ, Երեւան, «Զանգակ-97», 2001, էջ 37-43:
- ² Vaan Melikian, 'Tri Dokumenta O Deiatelnosti Garegina Nzhde V 1914-1917 gg. (K 115-Letiiu So Dnia Rozhdeniia)' [Երեք Փաստաթուղթ Գարեգին Նժդեհի 1914-1917թթ. Գործունէութեան Մասին (Ծննդեան 115ամեակի Առիթով)], Պատմաբանասիրական Հանդէս, Թիւ 1 (156), 2001, էջ 250-255: Ծառայողական ցուցակում նշուած իրադարձութիւնները ճշտուած են դիւանական փաստաթղթերով, մասնաւորապէս՝ դէպքերի մասնակից, ռուս զօրավար Ալեքսանդր Պարֆենովիչ Կուլեբեակինի եւ այլոց կազմած ռազմական հաշուետուութիւններում, որն հրապարակել է պատմաբան Մուրադ Կարապետեանը իր Հայկական Կամաւորական Քմբերը Եւ Ազգային Գումարտակները Կողկասեան Ռազմաճակատում (1914-1917 թթ.) գրքում (Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատարակչութիւն, 1999): Մելիքեանի հրապարակած այս յոյժ արժէքաւոր երեք ռուսերէն վաւերագրերից այս յօդուածում օգտագործուած ընդարձակ մէջբերումները հայերէն թարգմանութիւնը կատարուել է մեր կողմից:
- ³ Համբարձումեան, Վարք Նժդեհի, էջ 37-43:
- ⁴ Արամ Նազարեան, Հայկական Զօրամասերի Կազմաւորումը Կողկասեան Ծակատում (1914-1918 թուականներ), Երեւան, 1999, էջ 42-43, 48; Կարապետեան, էջ 50-62:
- ⁵ Melikian, էջ 251:
- ⁶ Համբարձումեան, Վարք Նժդեհի, էջ 37:
- ⁷ Melikian, էջ 252: Սոյն յօդուածում մինչեւ 1918ի Փետրուարի 1ը տեղի ունեցած դէպքերը նշել ենք հին տոմարով, իսկ այդ թուականից յետոյ տեղի ունեցած եղելութիւնները՝ նոր տոմարով՝ նկատի ունենալով, որ Ռուսաստանը նոր տոմարին է անցել այդ օրուանից: Եթէ սոյն յօդուածում ուղղակի մէջբերումներով օգտագործուած սկզբնաղբիւրների հեղինակները հետեւել են տարբեր սկզբունքի, այդ մասին նշել ենք ծանօթագրութիւններում:
- ⁸ Նազարեան, էջ 42-43, 48; Կարապետեան, էջ 62-63:
- ⁹ Կարապետեան, էջ 62:
- ¹⁰ Ղազար Բոչարեան, «Հայդուկի Մը Յուշերէն», Հայրենիք, ԺԲ. տարի, Թիւ 10 (142), Օգոստոս 1934, էջ 134:
- ¹¹ Melikian, էջ 252:
- ¹² Հայոց Ազգային Կենտրոնական Բիւրօն հիմնուել է Հոկտեմբեր 1912ի վերջին՝ Ռուսական Կայսրութեան հաշառտ վայրերի ներկայացուցիչների Թիֆլիսում կալացած համագումար-խորհրդակցութիւնում: Բիւրոյի ստեղծման անմիջական նպատակներն էին արակցութիւն ցոյց տալ Ամենայն Հայոց Կաթողիկոսին 1912ին սկսուած Բալկանեան Պատերազմի բռնկումից յետոյ Հայկական Հարցը միջազգային ատենաներում պաշտպանելու գործում, սերտ կապ պահպանել արեւմտահայութեան ազգային պատուիրակութիւնների հետ եւ նպաստել Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանի մշակած Հայաստանի ռեֆորմների ծրագրի իրականացմանը: Առաջին Աշխարհամարտի սկզբնական տարիներին, Բիւրօն կազմակերպեց, ձեւ եւ հոգի տուեց սկսած տարերային կամաւորական շարժմանը եւ նրա ամենաեռանդուն ղեկավարը դարձաւ:
- ¹³ Բոչարեան, էջ 134:

- ¹⁴ *Խմբապետ Մարտիրոս Արրահամյան, Իմ Յիշելի Յուշերը*, կազմեց Ա. Ամուրեան, Թեհրան, տպարան «Ալիք», 1978, էջ 249-257: Արրահամյանը թուականները տուել է նոր տոմարով: Քոչարեանը եւս, էջ 135, նշում է, որ Հայոց Ազգային Խորհուրդի եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (ՀԾԴ) Բիւրոյի միջեւ գումարուած խառն ժողովը 1915ի Ապրիլին որոշել էր «երեք գումարտակները միացնել մէկ անուան տակ՝ կոչելով զայն «Արարատքի օտրեատ» (Արարատեան զօրաբաժին)» եւ «ձիաւորներու հրամանատար նշանակել Խէչոյին»: Տե՛ս նաեւ՝ Վահան Համբարձումեան, «Յոյսի Եւ Յոյգի Օրերէն (Կամաւորական Շարժման 47-ամեակին Առթիւ)», *Հայրենիք*, Խ. տարի, Թիւ 6 (434), Յունիս 1962, էջ 55:
- ¹⁵ Melikian, էջ 252-253:
- ¹⁶ Համէլտ Գէորգեան, *Դոս, Երեւան*, «Հայաստան», 2000, էջ 82:
- ¹⁷ Կարապետեան, էջ 64: Նազարեան, էջ 50:
- ¹⁸ Կարապետեան, էջ 64-67:
- ¹⁹ Melikian, էջ 253-254:
- ²⁰ Աւօ, էջ 57-59:
- ²¹ Կարապետեան, էջ 66-67: Նազարեան, էջ 51-52:
- ²² Melikian, էջ 254:
- ²³ Տիգրան, «Շատախի Ինքնապաշտպանութիւնը», *Հայրենիք*, Խ. տարի, Թիւ 11 (107), Սեպտեմբեր 1931, էջ 138:
- ²⁴ Գէորգեան, էջ 103-106:
- ²⁵ Արրահամեան, էջ 264-265:
- ²⁶ Նոյն:
- ²⁷ Քոչարեան, էջ 139-140:
- ²⁸ Կարապետեան, էջ 64-67, 71-74:
- ²⁹ Քոչարեան, էջ 143-144:
- ³⁰ Կարապետեան, էջ 93:
- ³¹ Հրաչիկ Սիմոնեան, *Անդրանիկի Ժամանակը*, Գիրք Ա, Երեւան, «Կախա», 1996, էջ 520: Ռուսական հրամանատարութեան պարբերական ոչ-Հայանպաստ գործողութիւնների դէմ Անդրանիկին առաջին անգամ ընդվզեց 1915ի Յուլիսին, երբ ռուսական զօրքերը դուրս բերուեցին Հայ կամաւորների ջանքերով ազատագրուած Արեւմտեան Հայաստանի շրջաններից՝ պատճառ դառնալով արեւմտահայերի նոր կոտորածների, երկրի առաւել Հայաթափմանն ու աւերմանը:
- ³² Melikian, էջ 253:
- ³³ Խորէն Մուրադեան, «Ամերիկահայ Կամաւորի Մը Յուշերը», *Հայրենիք*, Խ. տարի, Թիւ 12, Դեկտեմբեր 1966, էջ 28: Տե՛ս նաեւ՝ Աւօ, էջ 59-61:
- ³⁴ Melikian, էջ 254:
- ³⁵ Մուրադեան, «Ամերիկահայ Կամաւորի Մը Յուշերը», էջ 29: Տե՛ս նաեւ՝ Աւօ, էջ 61-62:
- ³⁶ Սիմոնեան, էջ 527:
- ³⁷ «Սիմոն Բաբայեանի Խօսքը Իր Քեռու Եւ Նրա Տոհմի Մասին», *Նախիջեւան*, Գ. տարի, Բուն Հայոց 4493 (Յս. Քս. 2001)Թ., Քաղոց (Մայիս), Թիւ 20, էջ 11:
- ³⁸ Melikian, էջ 251: Նժդեհը ցարական կառավարութեան տարբեր կալանավայրերում բանտարկուած է եղել 1908-11 թթ.՝ մինչեւ իր փախուստը Բուլղարիա: Դատարանը նրան արդարացրել էր 1912ին՝ «Հակաօրինական Դաշնակցութիւն» կազմակերպու-

թեան մասնակցելու մէջ նրան ներկայացուած մեղադրանքը ապացուցուած չլինելու պատճառով»։ տե՛ս՝ Համբարձումեան, Վարդ Նժդեհի, էջ 21:

³⁹ Աւօ, էջ 63:

⁴⁰ Տիգրան Դէոյեանց, «Կեանքիս Դրուագներէից», Հայրենիք, ԻԲ. տարի, թիւ 6 (245), Նոյեմբեր-Դեկտեմբեր 1944, էջ 75:

⁴¹ Եփրեմ Սարգսեան, «1916-ին Եւ 1917-ին՝ Ալեքսանդրապոլը», Հայրենիք, ԽԵ. տարի, թիւ 11, Նոյեմբեր 1967, էջ 59-64:

⁴² Melikian, էջ 251:

⁴³ Նոյն, էջ 255:

⁴⁴ Աւագ Յարութիւնեան, Գարեգին Նժդեհի՝ 1921 թ. Թաւրիզի Դատաւարութիւնը (Ըստ Նորայայտ Վաւերաթղթերի), Երեւան, «Ազգայնական Ակումբ», 2001, էջ 111:

⁴⁵ Ժալո, թիւ 7, 21 Մայիսի 1917, էջ 4; տե՛ս նաեւ՝ Նժդեհի 28 Մարտի 1947ի Հարցաքննութեան արձանագրութիւնը, Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեանն Առնիթի Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ՀՀ ԱԱԾ) Արխիւ, Կարճուած Գործերի Ֆոնդ (ԿԳՖ), Հ. 12997, Նժդեհի Գործ, Հտ. 2, էջ 126:

⁴⁶ Ժալո, թիւ 7, 21 Մայիսի 1917, էջ 4; նոյն, թիւ 17, 30 Յուլիսի 1917; նոյն, թիւ 18, 6 Օգոստոսի 1917:

⁴⁷ «Հայոց Ազգային Համախորհրդակցութիւնը. Թիֆլիս, 1917 թ. Սեպտեմբեր-Հոկտեմբեր. Փաստաթղթեր Ու Նիւթեր», տե՛ս՝ Բանբեր Հայաստանի Արխիւներ, թիւ 1-2, 1992, էջ 113; Սիմոնեան, էջ 630:

⁴⁸ Ժալո, թիւ 3, 21 Ապրիլի 1917, էջ 4; նոյն, թիւ 6, 14 Մայիսի 1917, էջ 5-6; նոյն, թիւ 7, 21 Մայիսի 1917, էջ 3-4; նոյն, թիւ 8, 28 Մայիսի 1917, էջ 4; նոյն, թիւ 9, 4 Յունիսի 1917, էջ 4; նոյն, թիւ 15, 16 Յուլիսի 1917, էջ 3; նոյն, թիւ 16, 23 Յուլիսի 1917, էջ 3; նոյն, թիւ 17, 30 Յուլիսի 1917, էջ 4 եւն.:

⁴⁹ Ժալո, թիւ 6, 14 Մայիսի 1917, էջ 6:

⁵⁰ Ժալո, թիւ 13, 4 Յուլիսի 1917, էջ 3:

⁵¹ Նժդեհի 27 Յունիսի 1947ի Հարցաքննութեան արձանագրութիւնը, ՀՀ ԱԱԾ Արխիւ, ԿԳՖ, Հ. 12997, Նժդեհի Գործ, Հտ. 2, էջ 192-194:

⁵² Ժալո, թիւ 12, 25 Յունիսի 1917, էջ 3; նոյն, թիւ 14, 9 Յուլիսի 1917, էջ 3:

⁵³ Ժալո, թիւ 9, 4 Յունիսի 1917, էջ 3:

⁵⁴ Ժալո, թիւ 15, 16 Յուլիսի 1917:

⁵⁵ Ժալո, թիւ 10, 11 Յունիսի 1917, էջ 2:

⁵⁶ Ժալո, թիւ 1, 8 Ապրիլի 1917, էջ 2:

⁵⁷ Ժալո, թիւ 1, 8 Ապրիլի 1917, էջ 2; նոյն, թիւ 2, 15 Ապրիլի 1917, էջ 2; նոյն, թիւ 4, 30 Ապրիլի 1917, էջ 2; նոյն, թիւ 5, 7 Մայիսի 1917, էջ 3; նոյն, թիւ 6, 14 Մայիսի 1917, էջ 4-5; նոյն, թիւ 7, 21 Մայիսի 1917, էջ 3; նոյն, թիւ 8, 28 Մայիսի 1917, էջ 2; նոյն, թիւ 10, 11 Յունիսի 1917, էջ 2; նոյն, թիւ 18, 6 Օգոստոսի 1917, էջ 2; նոյն, թիւ 19, 13 Օգոստոսի 1917, էջ 2: Տե՛ս նաեւ՝ Աւօ, էջ 326-330; Գարեգին Նժդեհ, Գրական Երկեր, Երեւան, 2003, էջ 48-85:

⁵⁸ Աւօ, էջ 326:

⁵⁹ Համբարձումեան, Վարդ Նժդեհի, էջ 41:

⁶⁰ Շերամը Հայոց ազատամարտի դաշնակցական հերոսներից էր, Եփրեմ Խանի խմբապետներից, Եփրեմի ջոկատում «Անճումանի կռիւներու մէջ կռուած ու կոփուած»։ Մահացել է Թեհրանում, 1933ին։ Տե՛ս Վ. Իսկէնտէրեան, «Հայ Կամաւորի Մը Յուշերը

- (1914-1917)», *Հայրենիք*, ԼԷ. տարի, թիւ 2, Փետրուար 1957, էջ 76; Ա. Ամուրեան, Հ.Թ.-Դաշնակցութիւնը Պարսկաստանում 1890-1918, Թեհրան, տպարան «Ալիք», 1950, էջ 156: Դժբախտաբար մեզ չյաջողուեց պարզել Շերամի իսկական անուն-ազգանունը:
- ⁶¹ Նախիջևանի Հիմնահարցը Մոսկուայի 1921 թ. Մարտի 16-ի Խուս-Թուրքական Պայմանագրում (Գիտաժողովի Նիւթեր). Թաւելուած, կազմող՝ Ռ. Համբարձումեան, Երեւան, «Նախիջևան» Հրատարակչութիւն, 2001, էջ 168:
- ⁶² «Ինքնակենսագրութիւն», տե՛ս՝ Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Երեւան, «Հայաստան», 2001, էջ 302: Ինքնակենսագրութեան բնօրինակը գտնուում է ՀՀ ԱԱԾ արխիւում, Գործ 11278, Հտ. 4: Հատընտիրում «Ինքնակենսագրութիւն» տպագրուել է բազմաթիւ սխալներով ու աղաւաղումներով:
- ⁶³ Նժդեհի 15 Հոկտեմբերի 1946ի Հարցաքննութեան արձանագրութիւնը, ՀՀ ԱԱԾ Արխիւ, ԿԳՖ, Հ. 12997, Նժդեհի Գործ, Հտ. 1, էջ 129:
- ⁶⁴ Թարութիւնեան, էջ 111-112:
- ⁶⁵ Զեռագիրը գերմաներէն է, գտնուում է Ալֆրէդ Մուրադեանի Բեռլինում (Nassauische str. 43 10717 Berlin) բնակուող դստեր՝ Զարէ Դաւուդեան-Մուրադեանի մօտ: Փաստաթղթի մեքենագրեալ տարբերակը նա մեր խնդրանքով ուղարկել է Հայաստան եւ այժմ պահւում է Հայաստանի Պատմութեան Պետական Թանգարանի Նժդեհի ֆոնդում:
- ⁶⁶ Գէորգ Եովհաննէսի Ղազարեանի 6 Յունիսի 1947ի Հարցաքննութեան արձանագրութիւնը, ՀՀ ԱԱԸ Արխիւ, ԿԳՖ, Հ. 12997, Նժդեհի Գործ, Հտ. 3, էջ 141-142:
- ⁶⁷ Տե՛ս՝ Ռ. Համբարձումեան, Գարեգին Նժդեհը Ղարաքիլիսայի Ճակատամարտի Ոգեշնչողն Ու Կազմակերպիչը, Հանդէս Ամսօրեայ, ՃժԺ. տարի, թիւ 1-12, Երեւան-Երեւան 2003, էջ 341-410:

THE PARTICIPATION OF GAREGIN NZHDEH IN THE ARMENIAN VOLUNTEER UNITS OF WORLD WAR I (1914-1918) (Summary)

RAFAYEL HAMBARDZUMIAN

Garegin Nzhdeh (Ter-Harutiunian) was a prominent activist in the Armenian national-liberation movement. This article deals with his participation in the Armenian volunteer units organized by the Russian tsarist government immediately after the outbreak of the First World War. The author shows that Nzhdeh returned to Russia from Bulgaria to join the volunteers in October 1914. He first fought in the ranks of the Second Volunteer Group during the Russian thrust into Western Armenia in the spring and summer of 1915. Nzhdeh again fought against the Ottoman Turks in the spring and summer of the following year, this time in the ranks of the First Volunteer Corps. He returned to Transcaucasia in late 1916 and was active in the political life of the city of Alexandropol in the immediate aftermath of the Russian Revolution of February 1917. Finally, Nzhdeh took up arms again in early 1918 as part of the Armenian resistance to the Ottoman Turkish advance into Transcaucasia. The article sheds light on Nzhdeh's participation in these battles against the Ottoman Turks, culminating in the famous battle of Karakilise (now, Vanadzor) in May 1918, which stopped the Turkish advance and helped in the emergence of an independent Armenian republic.